Կ Ա Ր Ծ Ի Ք

ԽԱՉԱՏՈՒՐ ԼԵՎՈՆԻ ԲԱԲՈՅԱՆԻ <<ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 <<ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական հարաբերությունների պայմաններում էականորեն մեծանում է առևտրայի կազմակերպությունների դերը, քանի որ մրցակցային շուկան թելադրում է իր պահանջները տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի որակի, ցածր ինքնարժեքի, արտադրանքի իրացվելիության և այլ պայմանների բավարարման առումով: Այդ ուղղությամբ ցանկալի արդյունքներ ապահովելու համար խիստ կարևորվում է կառավարման նորագույն մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրումը և արտադրության արդիականացումը:

Տնտեսական ու տեխնիկական ժամանակակից բազայի ձևավորումը և մրցունակության բարձրացումն առավել քան ակնհայտ են դառնում: Այս առումով, առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրները տնտեսական զարգացման ներկա փուլում ձեռք են բերում մեծ կարևորություն: Պետք է նշել, որ այդ ոլորտում առկա են բազմաթիվ և բազմապիսի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են թե՛ գիտական նորագույն մեթոդների, հայտնագործությունների և գործնական փորձի առկայություն, թե՛ մարդկային և տեխնիկական ռեսուրսների կառավարման հմտությունների ունակություն:

Տնտեսական նոր հարաբերություններին անցման սկզբնական շրջանում, պայմանավորված տնտեսական նախկին կապերի խզմամբ, օրենսդրական համապատասխան դաշտի բացակայութամբ, պետական կարգավորման համակարգի անկատարությամբ և մի շարք այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի

գործոններով, տեղի ունեցավ տնտեսավարող սուբյեկտների միջև ապրանքային գործառնությունների իրականացման ոչ դրամական հաշվարկների ծավալների և կրեդիտորական պարտքերի աճ: Այդ առումով, զարգացման ներկա փուլում առևտրային կազմակերպությունների առջև ծառացած խնդիրների շարքում իրենց բնույթով առանձնանում են ֆինանսական կառավարման ճկուն և արդյունավետ մեխանիզմի մշակումը և կիրառումը: Ըստ էության, նշված խնդրի լուծմամբ մեծապես պայմանավորված են առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը և մրցունակության ապահովումը: Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման հիմնախնդիրների լուծման մոտեցումների մշակմանը: Դրված նպատակին հասնելու համար աշխատանքում համակողմանի վերլուծության են ենթարկվել ֆինանսական կառավարման խնդիրները, որոնց լուծմամբ է առավելապես պայմանավորված հանրապետության առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացումը: Այս հանգամանքը խոսում է ատենախոսության թեմայի ***արդիականության և հրատապության*** մասին:

Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք, որում իրականացված ուսումնասիրությունները հեղինակին թույլ են տվել հիմնավորել թեմայի կարևորությունը, բացահայտել տվյալ ոլորտի առանձնահատկությունները և մշակել դրանցով պայմանավորված տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ներածությունում հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և ներկայացված են դրան հասնելու համար լուծման ենթակա հիմնական խնդիրները:

Ատենախոսության ***առաջին՝ <<Ֆինանսական կառավարման էվոլյուցիան և հիմնարար հիմանդրույթները>>*** գլխում ներկայացվել են ֆինանսական

կառավարման հայեցակարգի զարգացման փուլերը և տրվել են դրանց համեմատական բնութագրերը, ուսումնասիրվել են ֆինանսական կառավարման հիմնադրույթները:

Հետազոտության ***երկրորդ՝ <<Կազմակերպության կապիտալի նախընտրելի կառուցվածքի ձևավորման գործընթացը ֆինանսական կառավարման տեսական և գործնական խնդիրների համատեքստում***>> գլխում ներկայացվել են կապիտալի կառուցվածքի ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերը, կատարվել է դրանց համեմատական վերլուծություն, քննարկվել են առևտրային կազմակերպության կապիտալի նախընտրելի կառուցվածքի ֆինանսական կառավարման մեթոդաբանական մոտեցումները, մշակվել է առևտրային կազմակերպություններում ընթացիկ ակտիվների և պասիվների նախընտրելի հարաբերակցության կանխատեսման համալիր մոտեցում:

Աշխատանքի ***երրորդ՝ <<Առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման ժամանակակից մոտեցումները կայունություն-վճարունակություն-իրացվելիություն կապում***>> գլխում ներկայացվել են առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման տեսամեթոդական հիմքերը, գնահատման, վճարունակության և իրացվելիության ֆինանսական կառավարման ժամանակակից մոտեցումները, ինչպես նաև առաջարկել են դրամական հոսքերի և դեբիտորական պարտքերի արդյունավետ կառավարման լուծումներ:

Ատենախոսության ***չորրորդ՝ <<Ֆինանսական կառավարման կատարելագործման ուղիները կապիտալի նախընտրելի կառուցվածքի կանխատեսման համատեքստում***>> գլխում առաջարկվել են առևտրային կազմակերպության իրացվելիության և վճարունակության գնահատման ցուցանիշների ներդաշնակեցման, ֆինանսական կայունության և վճարունակության գնահատման ցուցանիշների սահմանային միջակայքերի փոխկապակցության կանխատեսման, ֆինանսական կառավարման

համակարգում ընթացիկ ակտիվների կատարելագործման և անվճարունակությաան ռիսկի գնահատման մոտեցումներ:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ կապիտալի կառուցվածքի վարքագծային և ազդանշանային տեսությունների կատարելագործման համատեսքստում մշակվել է ուսուցանման կանխատեսման ամբողջական մոդել, առաջարկվել է պարտքային բեռը գնահատող ցուցանիշների երեք խումբ և որոշվել են դրանց վերահսկողության սահմանային միջակայքերը, առաջարկվել են հաշվեկշռի կառուցվածքի գնահատման, իրացվելիության ախտորոշման ու հաշվեկշռի վերակառուցման, ընթացիկ ակտիվների ու ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության ցուցանիշների աճի տեմպերը հաշվի առնող, ինչպես նաև պարտքային բեռի գնահատման, վճարունակության և իրացվելիության ընտրված ցուցանիշների միջև փոխկապակցությունը գնահատող մոտեցումներ:

Աշխատանքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում առևտրային կազմակերպությունների սնանկության հավանական վտանգի գնահատման արդյունքներով առաջարկվել է անվճարունակության ռիսկի ներքին վերասիկողության ֆինանսական քարտեզ և կառուցվել են կանխատեսման Logit-ռեգրեսիոն վերլուծության վրա հիմնված մոդելներ, որոնցով գնահատվում է առևտրային կազմակերպության անվճարունակության ռիսկը:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական և մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել տնտեսական կառավարման տարբեր մակարդակներում, դառնալ ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին ոլորտների հետագա զարգացումը պայմանավորող խթանիչ տեղաշարժերի բացահայտման, դրանց ճիշտ նպատակաուղղման և տնտեսական կայուն աճի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման արդյունավետ գործիք: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման համակարգի արդյունավետ գործունեության վրա բավականաչափ մեծ է տեխնոլոգիական և կազմակերպչական գործոնների ազդեցությունը: Ըստ էության, կառավարման գործընթացի բարելավման համար հատկապես անհրաժեշտ է համալիր վերլուծության ենթարկել դրանք: Դրա կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նորամուծական առաջարկությունների գործնական կիրառումն իր անմիջական ազդեցությունն է ունենում կառավարման համակարգի վրա: Կարծում ենք, աշխատանքում այս ուղղությամբ ուսումնասիրությունները բավարար խորությամբ չեն իրականացված:
2. Առևտրային կազմակերպության ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացումն, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև իրականացվող մարկետինգով: Այս առումով, կարծում ենք, որ ատենախոսությունում առևտրային կազմակերպություններում իրականացվող մարկետինգի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը և դրա բարելավմանն ուղղված

նորամուծական առաջարկությունների մշակումը կբարձրացներ աշխատանքի գիտական արժեքը:

3. Աշխատանքում հեղինակը նշում է, որ կազմակերպության կապիտալի կառուցվածքի ձևավորման գործընթացում հատուկ դեր է հատկացվում ֆինանսական լծակի արդյունավետությանը, ինչը հնարավորինս լավ արդյունքներ է ապահովում ֆինանսական կատարյալ շուկայի պայմաններում: Կարծում ենք, նման պնդմանը պետք է նախորդեր այդ ուղղությամբ առավել համակողմանի վերլուծության իրականացումը: Միաժամանակ, այն տեսակետը, որ ֆինանսական շուկայի ոչ արդյունավետ գործելու պայամաններում առևտրային կազմակերպությունների կողմից գերազանցապես բանկային համակարգի միջոցով սեփական ռազմավարական խնդիրների լուծումը ֆինանսական վիճակի վատթարացման պատճառ է հանդիսանում, կարիք ունի լրացուցիչ հիմնավորման ու պարզաբանման:

4. Հանրապետությունում առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ուսումնասիրելիս, մեր կարծիքով, հեղինակը բավարար խորությամբ չի անդրադարձել այնպիսի հարցերի, որոնք ուղղակիորեն պայմանավորված են տնտեսական նոր հարաբերություններին անցման դժվարություններով, ինչպես նաև անցած ժամանակահատվածում հանրապետությունում առկա սուբյեկտիվ բնույթի մի շարք սահմանափակումներով: Վերջիններս, ակնհայտորեն, ունեցել և առաջիկայում կունենան էական բացասական ազդեցություն տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսավորման խնդիրների վրա, որը պետք է հաշվի առնվեր ատենախոսի կողմից իրականացված վերլուծությունների ժամանակ:

5. Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման խնդիրները դիտարկելիս, հեղինակն իր վերլուծությունները հիմնականում իրականացրել է ելնելով հանրապետությունում գործող այնպիսի

տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական ցուցանիշներից, որոնք, մի շարք, այդ թվում նաև օբյեկտիվ պատճառներով չեն կարող լինել բնութագրական հանրապետությունում գործող մյուս տնտեսավարող սուբյեկտների համար: Այս հանգամանքը, կարծում ենք, որոշ չափով ազդել է ստացված արդյունքների գիտագործնական նշանակության վրա:

6. Ատենախոսությունում հեղինակի կողմից առաջարկվել է ֆինանսական ռիսկի և դրամական հոսքերի ցուցանիշների տեսանկյունից անվճարունակության ռիսկի գնահատման մոդելներ: Կարծում ենք, որ կատարված առաջարկությունների տարբերակումն ըստ տնտեսական գործունեության տարբեր ոլորտների որոշակիորեն կբարձրացներ աշխատանքի գիտագործնական նշանակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման հարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Խ. Բաբոյանի դոկտորական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել ֆինանսական կառավարման գործընթացում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության

բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Խ. Բաբոյանի <<Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման կատարելագործման ուղիները (ՀՀ նյութերով)>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 7-րդ կետի, ինչպես նաև դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 <<Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>> մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ«
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**
21.06.2023թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար **Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

21.06.2023թ.